



ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի
նախարարություն

հովանու ներքո (ՀՀ)



ԱՀ կրթության,
գիտության և սպորտի
նախարարություն

հովանու ներքո (Արցախ)



Kangourou
Sans
Frontières

միջազգային կազմակերպիչ

Երևան, 30 հունվարի, 2020 թ.

Հարգելի գործընկեր,

«Այբ» կրթական հիմնադրամը հայտարարում է **«Կենգուրու 2020»** միջազգային մաթեմատիկական մրցույթի մեկնարկը. մասնակցել ցանկացող դպրոցների գրանցումն արդեն սկսվել է:

Այս տարի «Կենգուրու» մրցույթը կանցկացվի **մարտի 19**-ին: Մենք սիրով սպասում ենք Ձեր դպրոցի ակտիվ մասնակցությանը երեխաների ներուժը բացահայտելու հնարավորություն տվող այս մրցույթին:

Մրցույթին մասնակցել ցանկացող աշակերտները պետք է վճարեն, անդորրագիրը դպրոց ներկայացնեն և դպրոցի ցուցակներում գրանցվեն մինչև **փետրվարի 17**-ը, իսկ դպրոցի մասնակցության հայտը պետք է ուղարկել կամ ներկայացնել հիմնադրամի գրասենյակ մինչև **փետրվարի 20**-ը:

Մեր հասցեն փոխվել է: Խնդրում ենք այսուհետ նամակներն ուղարկել

0037, ք. Երևան, Ազատության պող., 1/21-1 հասցեով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- Սույն Էլեկտրոնային նամակին չի հաջորդելու «Կենգուրու 2020» մրցույթի հրավերի թղթային տարբերակը. մենք աստիճանաբար անցնում ենք Էլեկտրոնային գրանցման համակարգի և համատեղ ջանքերով գնալով կնվազեցնենք օգտագործվող թղթի ծավալները: Խնդրում ենք դպրոցի պատասխանատուին փոխանցել ներկայացված տեղեկությունները և ուղղորդել նրան դեպի www.kangaroo.am կայք, որտեղից կարելի է ներբեռնել և անհրաժեշտության դեպքում տպել մրցույթին առնչվող բոլոր կյուրթերը:
- Յուրաքանչյուր մասնակից դպրոց ունի իր անփոփոխ ծածկագիրը, որը պարտադիր կիրառվում է դպրոցի մասնակցության հայտն ու մասնակիցների ցուցակը լրացնելիս, նաև մասնակցության համար տերմինալներով վճարելիս: **Ձեր դպրոցի ծածկագիրը** կարող եք գտնել www.kangaroo.am կայքում կամ ճշտել ձեր մարզային համակարգողից:
- Խնդրում ենք նաև մինչև փետրվարի 4-ը ներառյալ տեղեկացնել մարզային համակարգողներին՝ ինչպես են Ձեր դպրոցի աշակերտները նախընտրում ստանալ մրցույթի առաջադրանքները՝
 1. միայն հայերենով,
 2. երկլեզու տարբերակով՝ հայերեն-ռուսերեն,
 3. երկլեզու տարբերակով՝ հայերեն-անգլերեն:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ: «Մեղու 2019» և «Ռուսական արջուկ 2019» մրցույթների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները կուղարկվեն մասնակից դպրոցների Էլփոստերին մինչև փետրվարի առաջին կեսը:

Հարգանքով՝

Սոնա Կոչեցյան

Գործադիր տնօրեն

«Կենզուրու 2020» մրցույթին առնչվող ներքոնշյալ նյութերը կարող եք բեռնել www.kangaroo.am կայքից:

1. Դպրոցի հայտի ձև

Խնդրում ենք լրացնել մասնակցության հայտը և մինչև **փետրվարի 20-ը** ներկայացնել «Այբ» հիմնադրամի գրասենյակ կամ ուղարկել փոստով՝ Ձեր դպրոցի մասնակից աշակերտների ցուցակի և վճարման անդորրագրերի հետ միասին: **Մրցույթին կմասնակցեն միայն նշված ժամկետում հայտ ներկայացրած դպրոցները:**

2. Ուղեցույց դպրոցների համար

Այստեղ քայլ առ քայլ ներկայացված են դպրոցում մրցույթի կազմակերպման պատասխանատուի անելիքները՝ ըստ ժամանակացույցի:

3. «Կենզուրու 2020»-ի հայտարարություն և մրցույթին գրանցվելու ուղեցույց

• Տեղեկատվական պաստառ (A3 չափի)

Խնդրում ենք հնարավորության դեպքում պաստառը տպել և փակցնել դպրոցում:

• Ֆեյսբուքյան Էջով տարածվող հայտարարություն

Այս հայտարարությունը տարածեք դպրոցի ֆեյսբուքյան Էջում/խմբում:

4. Մասնակցության վճարը կատարելու համար անհրաժեշտ բանկային վավերապայմաններ

Այս նիշքում բերված է մասնակցության վճարը կատարելու կարգը՝ «ՎՏԲ-Հայաստան» բանկում (Հայաստան), «Արցախբանկ» ՓԲԸ-ում (Արցախ), ինչպես նաև «ԹԵԼ-ՍԵԼ» և «Իզի Փեյ» տերմինալների միջոցով:

5. «Կենզուրու 2019»-ի հակիրճ նկարագրող ամփոփում

Այստեղ ամփոփված են մրցույթի՝ անցյալ տարվա հիմնական արդյունքներն ու ձեռքբերումները:

Ինչ է «Կենզուրու»

«Կենզուրու» մեծ ժողովրդականություն վայելող մաթեմատիկական մրցույթ է և ներկայացնում է տրամաբանական ու հետաքրքրաշարժ խնդիրներ: Ամեն տարի մրցույթին մասնակցում են միլիոնավոր երեխաներ աշխարհի ավելի քան 80 երկրից: Մրցույթն անցկացվում է անմիջապես դպրոցներում՝ ներգրավելով 3-12-րդ դասարանցի բոլոր ցանկացող երեխաներին: Բոլոր մասնակից դպրոցներին և աշակերտներին տրվում են մասնակցության հավաստագրեր, բոլոր երեխաները ստանում են նաև հուշանվերներ, մրցանակակիրները՝ խրախուսական մրցանակներ, իսկ լավագույնները՝ նաև պատվոգրեր: Հաղթողներին սպասվում են արժեքավոր նվերներ, ընդհուպ մինչև տարբեր երկրներում կազմակերպվող միջազգային ամառային ճամբարի ուղեգիր:

«Կենզուրու» մրցույթը չի անցկացվում դպրոցների միջև, այլ նպատակ ունի համընդհանուր հետաքրքրություն առաջացնելու մաթեմատիկայի հանդեպ՝ այն առավել գրավիչ ու սիրելի դարձնելով երեխաների համար: Մրցույթի ավարտից հետո յուրաքանչյուր դպրոց կստանա իր աշակերտների արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն:

«Կենզուրու» մրցույթն անցկացվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հովանու ներքո:

Հայաստանում և Արցախում մրցույթի բացառիկ կազմակերպիչն է «Այբ» կրթական հիմնադրամը:

Մարզային համակարգողների հեռախոսահամարներ

1. Արագածոտն
093 01-08-61
2. Արարատ
093 38-08-64
3. Արմավիր
093 38-08-63
4. Գեղարքունիք
093 38-08-64
5. Երևան
098 38-08-63
6. Լոռի
093 38-08-63
7. Կոտայք
093 38-08-64
8. Շիրակ
093 38-08-63
9. Սյունիք
093 01-08-61
10. Վայոց ձոր
093 01-08-61
11. Տավուշ
098 38-08-63
12. Արցախ
097 33-79-55